

Փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի գիտահետազոտական գործունեության երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր

2018-2023 թթ.

Փիլիսոփայության ամբիոնի գիտահետազոտական ուսումնասիրության գլխավոր թեման է՝ « Անցումային հասարակության հիմնահարցերը Հայաստանում »:

Ըստ առարկայական ուղղությունների ենթաթեմաներ են.

1. Փիլիսոփայություն - «Սոցիալական փիլիսոփայության արդի փուլի հիմնահարցեր»
2. Քաղաքագիտություն - «Ռիսկերի և կոնֆլիկտների հաղթահարման հիմնահարցը անցումային հասարակությունում:
3. Իրավագիտություն - «Իրավական դաշտի վերափոխման անհրաժեշտությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում:
4. Մշակութաբանություն- «Հայաստանի 3-րդ Հանրապետության մշակութային քաղաքականության հիմնահարցեր:

Գիտահետազոտական գործունեության կարճաժամկետ ծրագրերը

h/h	Գործունեության հիմնական ուղղությունները	Ժամկետը
1.	Դասախոսական տեքստերի, առարկայական ուսումնական փաթեթների վերանայում ըստ անհրաժեշտության	յուրաքանչյուր տարի
2.	Բակալավրիատի համար կազմել նոր դասընթացներ և դրանց ուսումնական փաթեթներ	յուրաքանչյուր տարի
3.	Աշխուժացնել ուսանողների մասնակցությունը ՈԻԳԸ աշխատանքներին և հանրապետական ուսանողական մրցույթներին, ընդլայնել ուսանողների և դասախոսների համատեղ աշխատանքը ամբիոնի հիմնական գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ:	յուրաքանչյուր տարի
4.	Ավարտական աշխատանքների թեմաները համապատասխանեցնել ամբիոնի գիտահետազոտական հիմնական	յուրաքանչյուր տարի

	պատմագրության մոտեցումների հետ	
5.	Փիլիսոփայության և իրավագիտության կաբինետը կահավորել ժամանակակից տեխնոլոգիաներ ապահովող ակտիվ գրատախտակով և կաբինետ-լսարանը վերածել դատական նիստերի դահլիճի կրկնօրինակի	յուրաքանչյուր տարի
6.	Աշխուժացնել ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի կողմից բակալավրիատի ուսանողների խորհրդատվական աշխատանքները, դրանց համար սահմանել դասախոսների հերթապահության գրաֆիկ ամբիոնի կաբինետում:	յուրաքանչյուր տարի
7.	Պարբերաբար անցկացնել գիտամեթոդական սեմինարներ ամբիոնի հիմնական գիտահետազոտական թեմաների ուղղությամբ	յուրաքանչյուր տարի
8.	Աշխուժացնել կապը հասարակագիտական մյուս ամբիոնների հետ, համատեղ ան կացնել գիտամեթոդական սեմինարներ	յուրաքանչյուր տարի
9.	Ավելի աշխուժացնել ու բազմակողմանի դարձնել բուհ-դպրոց կապի շրջանակներում աշխատանքները սովորողների հետ և ընդլայնել խորհրդատվական ուսումնամեթոդական սեմինարները դպրոցների հումանիտար հոսքի ուսուցիչների համար:	յուրաքանչյուր տարի
10.	Դպրոցների, վարժարանների հումանիտար հոսքի ուսուցիչների համար մշակել ուսումնամեթոդական նյութեր, հանդես գալ դասախոսություններով:	յուրաքանչյուր տարի

Գիտահետազոտական գործունեության երկարաժամկետ ծրագրերը

h/h	Գործունեության հիմնական ուղղությունները	Ժամկետը
1.	Հաստատել գործնական կապեր հանրապետության բուհերի նմանօրինակ ամբիոնների հետ,անցկացնել համատեղ	2018-2023

	դասախոսական ուսանողական ընթերցումներ	
2.	Ակտիվորեն մասնակցել մարզի հեռանկարային զարգացման ծրագրերի կազմման ամբիոնի ոլորտին վերաբերող ուղղություններում	2018-2023
3.	Ամբիոնի երիտասարդ մասնագետների համար կազմակերպել խորհրդատվական զրույցներ գիտահետազոտական ուսումնասիրության թեմաներ ընտրելու և հոդվածներ գրելու համար:	2018-2023
4.	Պարբերաբար հրատարակել ամբիոնի գիտահետազոտական հիմնական ուղղության հետ կապված հոդվածներ, ձեռնարկներ, դասագրքեր և մեթոդական նյութեր:	2018-2023
5.	Օգնել իրավագիտության բաժնի ուսանողներին մասնակցելու միջազգային տարբեր ծրագրերին, հանրապետական ուսանողական մրցույթներին:	2018-2023
6.	Հնարավորության դեպքում կազմակերպել և անցկացնել տարբեր բնույթի կոնֆերանսներ, գիտական ընթերցումներ՝ դասախոսների և ուսանողների մասնակցությամբ:	2018-2023
7.	Ամբիոնը համալրել բարձր որակավորում ունեցող իրավաբան երիտասարդ մասնագետներով	2018-2023
8.	Մասնակցել միջազգային կարճաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերին եվրոպական և ԱՊՀ տարածաշրջանում	2018-2023
9.	Ժամավճարային կարգով աշխատանքի հրավիրել իրավագիտության ոլորտի բարձրակարգ մասնագետների:	2018-2023

Փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ՝

Գ.Լ. Եթիմյան